

491.99-5
—
4 - 82

5903

04 MAY 2010

491.99-5

Ա-82

Ա. ԱՐԱՐԱՏԻ

Մ

ՏԱՐԱԿԱՆ

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐՀԱԲԱՐ ԼԵԶՈՒՀԻ

(Քերականուկան ամենակարեւոր զիսելիքներ տարրուկան եւ միջնա-
կազ դպրոցների սուբյեկտների հայ մանակների համար)

ԳԻՒՆ 20 դիզ.



ԵՐԿՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

ԱՀԵՔՍԱՆԴՐԱՊՈՂ

Տպարան Յակովը Դասապեանցի

1907

(34)

50K.

20 FEB 2013

ՅԱՌԱՋԱԲԱՆԻ ՏԵՂ

Արդէն անհերքելի ճշմարտութիւն է, որ ամեն մի ազգ ունի իւր սեպ-հական լեզուն և այդ լեզուին յատուկ հնչիմներ ու դարձուածքներ՝ որոց կա-նոններով հանդերձ, այսինքն՝ քերականութիւն:

Մենք էլ նոյնպէս՝ բացառութիւն չկազմելով օտար ազգերից, ունինք մեր մայրենի լեզուի քերականութիւնը, որով և գիտակցաբար հաղորդում ենք մեր մտքերը միմեանց:

Գ ի տակ ց աբար ասացինք, որովհետեւ առհասարակ այն մարդիկ, որոնք անտեղեակ են իրանց լեզուի արհեստին, այլ կեանքի մէջ միայն վարժութեամբ են սովորել լեզուն, խօսակցութեան ժամանակ իրանք էլ չեն հասկանում, թէ ուղիղ թէ անուղիղ են խօսում, ինչպէս և գրելու ժամանակ չգիտեն իսկապէս՝ կանոնաւոր են դասաւորել իրանց մաքերը, թէ անկանոն և այլն:

Սպյո՞ն համառօտ զասավիրքը, որը մենք ցանկանում ենք նուիրել հայ մա-
նուկներին, մտնաւանդ նրանց, որոնք գեռ իրանց մայրենի լեզուին անտեղեակ, մտնում են պիտական զպրոցները օտար լեզուներ սովորելու համար, անուա-
նեցինք «տարբական»—սկզբնական կամ վարժողական, —որովհետև սրբանով հայ
մանուկը ոչ թէ պիտի ընդուլանայ իւր մայրենի լեզուի ընդհանուր օքնքներին
մանրամասնօրէն, այլ միայն նրա բերականական զիխաւոր գիտելիքներին,
այսինքն այնպիսիներին, որոնք անհրաժեշտ են նրան իւր մտքերը մայրենի
լեզուի միջոցաւ կանոնաւոր կերպով, թէ զրաւոր և թէ բերանացի, ուրիշին
հաղորդելու, և բացի այդ՝ նաև պիտական լեզուի բերականական գիտելիքները
դիւրին և հաստատուն կերպով ըմբռնելու և հասկանալու համար, ինչպէս որ
մենք փորձել ենք մեր՝ մօտ քառասոնամեայ ուսուցչական գործունէութեան
մէջ։ Եյդ իսկ պատճառով աշխատել ենք, որքան կարելի էր, ձեակերպել սա
ուսուերէն լեզուի ամենատարածուած տարրական բերականութիւններին հա-
մաձայն։

Որովհետեւ քերականական արուեստը սովորելու համար ամեն մի ազգի լեզուի մէջ չորս գլխաւոր տարերք կան, այն է՝ հնչիւն կամ տառ, վանկ, բառ և բան կամ նախադասութիւն, ուստի և մեր այս գրքոյնը բաղկացած է չորս բաժնից:



890
41

Առաջին բաժնում խօսուած է տառերի, նրանց բաժանման և գործածութիւնների մասին:

Երկրորդում—վանկերի, նրանց նշանակութիւնների, դասակարգութեան կամ բանի մասունքների և նրանց գործածութիւնների մասին և այլն:

Երրորդում—բառերի, նրանց կազմութեան և առղադարձութեան կտնուների մասին:

Չորրորդում—նախադասութիւնների, նրանց գլխաւոր տեսակների և կէտաղըութեան մասին:

Մանուկներին աւանդելի դասերի նիւթը և նրանց բաժանմունքները գրուած են գրքոյկիս մէջ հետեական դասաւորութեամբ, առանց շեղուելու լեզուի բնական օրէնքից, այսինքն առանց որկէ թռիչք կամ յետադարձութիւն անելու:

Դասագրքիս մէջ ամեն մի աւանդելի դասի վերջում վարժութեան օրինակներ թէպէտ գրուած են, բայց սակաւոթիւ, որովհետեւ հմուտ և իւր գործը գիտցող ուսուցչի համար արդէն պատրաստի վարժեցնող ձեռնարկ կարող է ծառայել և մանուկի ընթերցանութեան գիրը, այդ իսկ պատճառով ցանկալի էր, որ այս քերականական ամենակարեօր գիտելիքները դասխոսուէին աշակերտաներին իրանց ընթերցանութեան և թելատրութեան դասերի հետ անբաժան:

Գրքոյկիս չորրորդ բաժնի վերջում, իբրև յաւելուած, գրուած են միքանի գիրը մերժանելի հատուածներ և յօդուածներ թելատրութեան, վերլուծման և բառընթարութեան համար:

Իրաւի, մենք մեզ բարոյական տեսակէտից բոլորովին վարձատրուած կը համարենք, եթէ այս մեր փոքրիկ աշխատասիրութիւնը իւր նպատակին ծառայէ և մեր հայ մանուկներին տայ այն օգուտը, որը ցանկանում է սպասում է

աշխատասիրով:

Յուլիս, 1903 թ.

Ա Ռ Ա Զ Ի Ն Բ Ա Ժ Ի Ն

Տ Ա Ռ Ե Ր

§ 1. Ի՞նչ է տառը:

Տառերը մարդկային լեզուի ամենապարզ հնչիւններն են, որոնք՝ եթէ թղթի վրայ ձեակերպուեն, կոչւում են գրեր:

Հայերէն լեզուն երեսունեռութ գիր ունի—ա, բ, գ, դ, ե, զ, է, ը, թ, ժ, ի, լ, խ, ծ, կ, հ, ձ, ղ, ճ, մ, յ, ն, շ, ռ, ռ, ս, վ, տ, ց, ւ, փ, ք, և, օ, ֆ:

Սրանք բաժանում են երկու տեսակի՝ 1) ճայնատր և 2) բաղաձայն:

§ 2. Ճայնատր տառերի մասին:

Ճայնատր կոչւում են այն տառերը, որոնք հնչւում են իրանց յատուկ ձայներով, առանց ուրիշ տառերի օգնութեան:

Հայերէն լեզուի մէջ երկու տեսակ ձայնատրներ են լինում՝ 1) պարզ և 2) երկրարքառ:

Պարզ ձայնատրները եօթն են—ա, ե, է, ը, ի, ո, օ:

Երկրարքառները ութն են—այ, աւ, եա, եօ, եւ(և)իւ, ոյ, ու:

§ 3. Բաղաձայն տառերի մասին:

Բաղաձայն կոչւում են այն տառերը, որոնք առանց ձայնատր տառերի օգնութեան չեն կարող հնչուել. սրանք երեսունեմէկ հատ են—ը, գ, դ, ժ, թ, ժ, ի, խ, ծ, կ, հ, ձ, ղ, ճ, մ, յ, ն, շ, ռ, պ, չ, ռ, ս, վ, տ, ց, ւ, փ, ք, և, օ:

Սրանցից երկուսը—յ, ւ, — ձայնատրների հետ միանալով, կազմում են երկրարքառ ձայնատրները:

§ 4. Բաղաձայների տեսակները:

Հայերէն լեզուի բաղաձայն տառերը սովորաբար երեք տեսակ են հնչւում—թաւ, միջակ և նուրբ, այդ պատճառով էլ լինում են թաւ, միջակ, և նուրբ բաղաձայներ, որոնք և կոչում են լծորդատառեր:

Ահա նրանց ալիւսակը:

| | | | | | | | | | | | |
|-------|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Թաւ | թ | շ | չ | ց | փ | թ | գ | խ | հ | ն | զ |
| Միջակ | դ | ժ | ձ | ր | դ | — | — | — | — | — | — |
| Նուրբ | տ | ս | ճ | ծ | պ | կ | ս | դ | յ | ր | ւ |

Այս լծորդատառերը հարկաւոր է անշուշտ իրանց ճիշտ հընչիններով արտասանել, որպէսզի մէկը միւսի տեղ չփորձածուի ուղղագրութեան մէջ, որովհետեւ նրանք շատ անդամ բառի նշանակութիւնը փոխում են, օր. բանիր—պանիր, զարի—կարի—քարի, ղար—տար, զուր—սուր ևայլն:

§ 5. Պարզ ձայնաւորների գործածութիւնը:

1. Պարզ ձայնաւորներից ե և է, ո և օ տառերը թէպէտ բառերի մէջ նոյնանման հնչիւններ ունին, բայց շատ անգամ մէկը միւսի տեղ դրուելով՝ բառի նշանակութիւնը փոխում են՝ սէր—սէր, մեզ—մէզ, հօր—հոր, հօտ—հօտ ևայլն:

2. Ե և օ ձայնաւորները բառերի վերջը չեն զրւում, այլ ե տառի տեղ գործ է ածւում է, իսկ օ տառից յետոյ միայն բաղաձայն կարող է լինել—Մարզարէ, Դայանէ, կուտէ, կըզրէ, տօն զրօշ ևայլն:

Միմիայն օտար լեզուներից վեր առած բառերի և ուամկան լիզուի մէջ կրճատուած անունների վերջը օ տառը գործ է ածւում—Ռուսօ, Կարնօ, Սարօ, Կարօ, Ցովօ ևայլն:

3. Ե և օ ձայնաւորները բառերի սկիզբը հնչւում են իրանց իսկական ձայներով, իսկ բառերի մէջ և տառը հնչւում է՝ ինչպէս

կարճ է, իսկ ո—ինչպէս օ—երկինք, երկիր, ոսկի, ոսուս. գեղեցիկ, կերակուր, երկրորդ, գող ևայլն:

Միայն վ տառից առաջ բառերի սկիզբը ո հնչւում է՝ ինչպէս օ—ով, ովկիանոս ևայլն:

§ 6. Երկրարբառների գործածութիւնը:

1. Այ և ոյ երկրարբառները բառերի սկիզբը և մէջը պահում են իրանց ձայնը, իսկ բառերի վերջը նրանք յամբ են մնում—լըստում է միայն ա և ո տառերի ձայնը—այգի, այսօր, տղայական, ծառայութիւն. բոյս, կոյս, լոյս. Ազքայ, ընկայ, ընծայ, յետոյ, ոշխոյ ևայլն:

ա) Խոտորւում են միքանի միավանկ բառեր, որոնց վերջը այ և ոյ երկրարբառները իրանց ձայնը պահում են—հայ, վայ, խոյ, նոյ ևայլն:

բ) Հրամայական ձևի բառերի, յատուկ անունների (աս ա, գն ա, խաղ ա, Յուղ ա, Ռուս ա, Մուս ի ա, Մոսկ կ ու ա) և հետեւեալ բառերի վերջը—ս ա, դ ա, ն ա, ս ր ա, դ ր ա, ն ր ա, ա հ ա, ա պ ա, քո—յ տառը վերանում է:

2. Իւ երկրարբառը բառերի սկիզբը և մէջը, եթէ իրանից յետոյ բաղաձայն ունի, հնչւում է՝ ինչպէս իու, իսկ բառերի վերջը և ձայնաւորներից առաջ ինչպէս իվ—իու, հիւր, միւրեղ. թիւ, հաշիւ, հիւանդ և այլն:

3. Ու երկրարբառը բառերի սկիզբը և վերջը պահում է իւր սովորական հնչիւնը, իսկ բառերի մէջ ձայնաւորներից առաջ հնչւում է՝ ինչպէս մեղմ վ—ուսում, լեզու. Աստուած, վարուել, աղուէս, գրուել, փրկուել ևայլն:

4. Եա երկրարբառը բառերի սկիզբը չի գործածում, մէջը՝ իւր ձայնով է հնչւում, իսկ վերջն անձայն յ է ընդունում—մանեակ, լրանեակ, ուկեայ, արծաթեայ ևայլն:

5. Մի երկու տեղ և տառից յետոյ պատահում է օ և կազմում եօ երկրարբառ - եօթը, արդեօք, կարծեօք:

§ 7. Բաղաձայների գործածութիւնը:

1. Վ բաղաձայնը միայն բառերի սկիզբն է գործածում, իսկ բառերի մէջ ո ձայնաւորից յետոյ — վարդան, վագր, վլէժ, ժողովել, գորովագութ, կով, ծով, ևայլն:

Միւս բոլոր տեղերում վ տառի տեղ և կամ ու է դրւում—
կոռուել, կոռում է, թուռ է, հաշուել եայլն:

Խոտորւում են բարդ և ածանցեալ բառերը, որոնց մէջ վ տառը դրւում
է նաև միւս ձայնաւորներից, ինչպէս և բաղաձայներից յետոյ—ն աւա-
վար, կառավարել, հօգեվարք, անվարել եայլն:

2. Բաղաձայն բ, պ, փ, տառերից առաջ յաճախ ն փոխւում է
մ տառի—ամբարիշտ, ամփոփել, ամպարտաւան եայլն:

§ 8. Գլխատառերի գործածութիւնը:

Հայերէն լեզուի մէջ գլխատառերը գործ են ածւում հետե-
եալ տեղերում:

1. Իւրաքանչիւր նոր խօսքի սկզբում:—Կայէնն սպանեց
Արէլին:

2. Վերջակէտից յետոյ:—Լուսացաւ: Ամեն մարդ շտապեց իւր
գործին:

3. Յատուկ անունների սկզբում:—Արամ, Երասխ, Արագած,
Էջմիածին:

4. Սրբազն անունների, պատուանունների և տիտղոսների
սկզբում:—Աստուած, Փրկիչ, Կաթողիկոս, Վեհափառ Տէր, Նո-
րին Արքայական Մեծութիւն եայլն:

5. Ոտանաւորների իւրաքանչիւր տողի առաջին բառի սկզբում:

Ուրախութիւն քեզ անպակաս,
Ո՞վ դու մանուկ սիրելի,
Ծլիս, ծաղկիս ու զօրանաս,
Տալով պտուղ արժանի:

(Ս. Շահ.-Ազիզ.)

ԵՐԿՐՈՐԴ ԲԱԺԻՆ

ՎԱՆԿԵՐ

§ 1. Ի՞նչ է վանկը:

Բառի այն մասը, որը մի անգամով է արտասանւում. կոչւում
է վանկ:—Մարմին բառը կազմուած է երկու վանկից՝ մարմին:

Վանկը կազմուում է կամ մի ձայնաւորից (թէ պարզ և թէ
երկրարբառ) կամ ձայնաւորի և բաղաձայների միաւորութիւ-
նից:—Ե-կե-ղե-ցի: Ու-սում: Այ-գի:

Իւրաքանչիւր բառի մէջ որը առան որ ձայնաւոր լինի, այնքան
էլ վանկ կունենայ այդ բառը:

Վանկերի թուին նայելով՝ բառերը լինում են միավանկ, երկա-
վանկ եւ բազմավանկ:—Քար միավանկ է: Երկիր երկավանկ է: Էջ-
միածին բազմավանկ է:

§ 2. Ինչպէս պէտք է վանկել բառերը:

1. Եթէ բառի մէջ երկու ձայնաւոր կան, նրանցից երկրորդը
միանում է հետեւեալ վանկին, — է-ակ, ղի-ակ, թի-ակ եայլն:

2. Եթէ բառի մէջ մի բառաձայն կայ, պէտք է միացնել
իրանից յետոյ եղող ձայնաւորին, — բա-ըակ, կա-ըակ, սե-ղան եայլն:

3. Եթէ բառերի մէջ երկու կամ աւելի բաղաձայն կան, նր-
րանցից միայն վերևինը միանում է իրանից յետոյ եղող ձայնա-
ւորին, իսկ միւսները մնում են նախորդ վանկի մէջ, — եր-շա-նիկ,
թարգ-ման, երկ-նաւոր եայլն:

4. Եթէ բառերի սկիզբը երկու կամ աւելի բաղաձայն կան,
հարկաւոր է առաջին վանկի մէջ ը աւելացնել—ըը-նա-կիշ, տը-
տունչ, ծըն-ծա-ղիկ եայլն:

5. Եթէ բառերի վերջը երկու կամ աւելի բաղաձայն կան, հարկաւոր է նրանց միացնել իրանից առաջ եղող ձայնաւորին, — հանգա-մանք, մեծա-յարգ, դատարկ ևայլն:

6. Իսկ եթէ բաղաձայներից վերջինը ն կամ ը լինի, այն ժամանակ նրանք իրանցից առաջ եղող բաղաձայն տառի հետ առանձին վանկ են կազմում՝ ը տառի օգնութեամբ, — կայ-սըր, ծա-նըր, բե-ոըն, մա-սըն ևայլն:

§ 3. Տողադարձի կանոնները:

Բառերը մի տողից միւսը փոխադրելու կանոնը կոչում է տողադարձ:

Տողադարձի ժամանակ հարկաւոր է բառն ուղիղ վանկերի վերածել՝ վերոգրեալ կանոններին համաձայն (§ 2):

Բացի այդ պէտք է զիտենալ և հետեւեալը.

1. Միավանկ բառերը չեն կարող մի տողից միւսը փոխադրուել:

2. Երկբարբառ ձայնաւորներն անբաժան են մնում:

3. Բառերը մի տողից միւսը փոխադրելու ժամանակ տողի վերջը զրում է մի ֆոքրիկ գիծ, որ կոչում է ննջամնայ (-):

ԵՐՈՌՈՒԴԻ ԲԱԺԻՆ

ԲԱՌԵՐ

§ 1. Ինչ է բառը:

Մէկ կամ աւելի վանկ, որ իւր մէջ մի միտք կամ նշանակութիւն է պարունակում, կոչում է բառ, — երգ, գարի, դանակ — բառեր են:

Բառերը լինում են՝ պարզ և բարդ, նախատիպ և ածանցեալ:

§ 2. Պարզ եւ բարդ բառեր:

Այն բառերը, որոնք միայն մի նշանակութիւն են պարունակում իրանց մէջ, կոչում են պարզ, — հաց, ձեռք, բարի, շար, — պարզ բառեր են:

Այն բառերը, որոնք երկու կամ աւելի բառերից են կազմուած, կոչում են բարդ, — բարեկամ, ջրկիր, հացթուխ, չարասիրտ, առետուր, աղուհաց բարդ բառեր են:

Բարդ բառերը կազմում են կամ առանց յօդակապ տառերի կամ նրանց օգնութեամբ. յօդակապ տառերը հինգ են — ա, ե, ի, և, օ. Հացթուխ, ջրկիր, կառավարել, բարեկամ, բանիբուն, կերուխում, առետուր:

§ 3. Նախատիպ ու ածանցեալ բառեր:

Այն բառերը, որոնք ուրիշ բառերից չեն առաջ եկած և իրանց սկզբնական տիպը կամ կերպարանը անփոփոխ են պահել, կոչում են նախատիպ. — ձայն, ջուր, մատ, մարդ — նախատիպ բառեր են:

Իսկ այն բառերը, որոնք սկզբից կամ վերջից այլնայլ մաս-

նիկներ են ընդունել, կոչւում են ածանցեալ, — անձայն, ձայնաւոր,
ձայնաւութիւն, տմարդի, մարդկութիւն, մարդկային — ածան-
ցեալ բառեր են:

§ 4. Բանի մասունքները:

Իւրաքանչիւր բառ, առանձին վեր առած, կազմում է բանի
կամ նախադասութեան մի մասը:

Բանի մասունքը ինն են՝

| | |
|-------------------|------------------|
| ա. Գոյական անուն: | ե. Բայ: |
| բ. Ածական անուն: | գ. Նախադրութիւն: |
| գ. Թուական անուն: | է. Մակրայ: |
| դ. Դերանուն: | ը. Հաղկապ: |

թ. Միջարկութիւն կամ ձայնարկութիւն:

Սրանցից առաջին հինգը խօսքի մէջ գործածուելիս փոփո-
խում են իրանց վերջաւորութիւնները, ուստի և կոչւում են փո-
փոխական մասունք բանի, իսկ մնացեալ չորսը անփոփոխ են:

Ա. ԳՈՅԱԿԱՆ ԱՆՈՒՆ

§ 2. Ի՞նչ է գոյական անունը:

Իւրաքանչիւր առարկայ ունի իւր առանձին անունը, որը
բերականութեան մէջ կոչւում է գոյական անուն, — մարդ, բա-
ղար, փայտ, անուն, զօրութիւն - գոյական անուններ են:

Գոյական անունները երեք տեսակի են բաժանուում՝ 1) յա-
տուկ, 2) հասարակ և 3) հաւաքական:

1. Յատուկ կոչւում է այն անունը, որը տրւում է մի որեւէ
առարկայի՝ նրան իւր նման ուրիշ առարկաներից տարբերելու
համար, — Տվիխ, Արագած, Արաքս, Արամ, Շիրակ, — յատուկ անուն-
ներ են:

2. Հասարակ կոչւում է այն անունը, որը շատ միատեսակ
առարկաների է պատկանում, — սեղան, տուն, բաղար, գետ,
գիւղ, — հասարակ անուններ են:

3. Հաւաքական կոչւում են այն միատեսակ առարկաների
անունները, որոնք միասին վեր առած՝ մի ամբողջութիւն են կազ-
մում, — անտառ, գունդ, երամ, հօտ — հաւաքական անուններ են:

§ 6. Առարկաների տեսակները

Առարկաները երկու տեսակի են բաժանուում՝ նիւթական և
հուատոր:

Նիւթական կոչւում են այն առարկաները, որոնց մենք ճա-
ռաշում ենք մեր հինգ զգայարաններով — տեսանելիքով, լսելիքով,
շօշափելիքով. հոտոտելիքով և ճաշակելիքով, — բամբակ, երկաթ,
կանաչ, վարդ, զանգ — նիւթական առարկաներ են:

Մուատոր կոչւում են այն առարկաները, որոնց ոչ թէ մեր
հինգ զգայարաններով ենք ճանաչում, այլ մտքով ենք ըմբռ-
նում — սէր, իմաստութիւն, մտածմունք մուատոր առարկաներ են:

Նիւթական առարկաներն, իրանց կարգին երկու տեսակ են
լինում — շնչատոր և անշոնչ:

Շնչատոր կոչւում են այն առարկաները, որոնք իրանց ազատ
կամքով կարող են մի տեղից միւսը շարժուել. — մարդ, գազան,
թռչուն, անասուն, զեռուն, միջատ — շնչատոր առարկաներ են:

Իսկ անշոնչ կոչւում են այն առարկաները, որոնք իրանց
լամքով չեն կարող շարժուել. — բար, փայտ, տուն, գիրք — ան-
շոնչ առարկաներ են:

Մուատոր առարկաների մէջ էլ կան այնպիսինները, որ թէն
մենք մտքով ենք ըմբռնում. բայց առանձին գոյութիւն ունին — հողի,
յուշտակ, Աստուած. կան էլ այնպիսինները, որոնք ուրիշ առար-
կաններից վեր առած յատկութիւններ ու գործողութիւններ են —
յաջութիւն, բարութիւն, կարօտութիւն, միաբանութիւն. սրանք
կոչւում են նաև վերացական:

§ 7. Գոյական անունների սեռը:

Գոյական անունները չ'ըս սեռ ունին — արական, իգական,
հասարակ և չէզօք:

Քոլոր առու առարկաների անունները արական սեռի են, — հայր, եղբայր, փեսայ, արազադ, խոյ — արական սեռի են:

Քոլոր էզ առարկաների անունները իգական սեռի են — մայր, քոյր, հարսն, կին, մատակ, հաւ, մարի — իգական սեռի են:

Կան անուններ էլ, որոնք միանգամայն թէ արական և թէ իգական անունների կարող են պատկանել և կոչւում են հասարակ սեռի — ձի, մարդ, երեխայ, աղաւնի — հասարակ սեռի անուններ են:

Այն անշունչ և վերացական առարկաների անունները, որոնք ոչ արական կարող են լինել և ոչ իգական, կոչւում են չէզօք, — տուն, բար, ծառ, թուղթ, մատիտ, — չէզօք սեռի անուններ են:

§ 8. Գոյական անունների թիւը:

Գոյական անունները երկու թիւ ունին — եզակի և յոզնակի: Եզակի թիւը ցոյց է տալիս մի առարկայ, իսկ յոզնակին — շատ առարկաներ. — մարդ, բար, տուն, սունկ — եզակի են, իսկ մարդիկ. բարեր, տներ, սունկեր — յոզնակի:

§ 9. Գոյական անունների հոլովները:

Գոյական անունները եօթն հոլով ունին, որոնք պատասխանում են հետևեալ հարցերին:

1. Ուզդական — հվ, բնչ,
2. Սեռական — ում, ինչի,
3. Տրական — ում, ինչի, (ն)
4. Հայցական — ում, բնչը,
5. Բացառական — ումնից, ինչից,
6. Դործիական — ումնով, ինչով.
7. Ներդայական { ունում, ինչում, աշակերտում, բարում
{ ում մէջ, ինչի մէջ աշակերտի մէջ, բարի մէջ

Բացի սրանցից՝ կայ նաև մի հոլով — կոչուկ ան, որը նման է ուղականին. Տէր, օգնիր ինձ: Արամ, եկ այստեղ: Տէր, Որամ — կոչական հոլով են:

Ով բնչ եալին հարցերը շնչառը առարկաներին են վերաբում, իսկ բնչ, ինչի եալին — անշունչ:

§ 10. Հոլովում

Գոյական անունները փոփոխում են ա) հոլովով և բ) թուով:
Այս փոփոխումը կոչւում է հոլովում:

Հոլովումը լինում է կանոնաւոր և անկանոն:

Կանոնաւոր հոլովումը չորս է. նրանք որպշում են եզակի թուի սեռական հոլովի վերջաւորութիւններով:

Սուաջին կանոնաւոր հոլովման սեռականը վերջանում է ի, երկրորդինը — ու, երրորդինը — ան կամ եան, չորրորդինը — ուան կամ ուայ:

§ 11. Առաջին կանոնաւոր հոլովում:

(ի)

| | b q a կ ի թ ի ւ |
|------|--------------------------------|
| Ուդ. | աշակերտ |
| Ա. | աշակերտի |
| Տ. | աշակերտի (ն) |
| Հ. | աշակերտին |
| Բ. | աշակերտից |
| Գ. | աշակերտով |
| Ն. | { աշակերտում { աշակերտի մէջ |
| | { բարում { բարի մէջ |

| | Յ ո գ ն ա կ ի թ ի ւ |
|------|--------------------------------------|
| Ուդ. | աշակերտներ |
| Ա. | աշակերտների |
| Տ. | աշակերտների (ն) |
| Հ. | աշակերտներին |
| Բ. | աշակերտներից |
| Գ. | աշակերտներով |
| Ն. | { աշակերտներում { աշակերտների մէջ |
| | { բարերում { բարերի մէջ |

Այսպէս հոլովում են գոյական անունների մեծ մասը:

§ 12. Երկրորդ կանոնաւոր հոլովում:

(ու)

| | b q w k h ð þ i | mawawñi |
|------|--------------------|----------------------------------|
| Ուղ. | աղաւնի | մատանի |
| Ա. | աղաւնու | մատանու |
| Տ. | աղաւնու (ն) | մատանու (ն) |
| Հ. | աղաւնուն | մատանի (ն) |
| Բ. | աղաւնուց | մատանուց |
| Գ. | աղաւնով | մատանով |
| Ն. | աղաւնու մէջ | { մատանում մատանու մէջ |

| | թ ռ գ ն ա կ ի թ ի ւ | mawawñibñk |
|------|-----------------------|---|
| Ուղ. | աղաւնիներ | մատանիներ |
| Ա. | աղաւնիների | մատանիների |
| Տ. | աղաւնիների (ն) | մատանիների (ն) |
| Հ. | աղաւնիներին | մատանիներին (ը) |
| Բ. | աղաւնիներից | մատանիներից |
| Գ. | աղաւնիներով | մատանիներով |
| Ն. | աղաւնիների մէջ | { մատանիներում մատանիների մէջ |

Այս հոլովման վրայ հոլովում են բոլոր ի վերջացող գոյական անունները. միավանկ բառերի **մէջ** ի վերջաւորութիւնը հոլովուելիս մնում է.

Ի վերջացող գոյական անուններից միքանիսը, ինչպէս նաև նոյն վերջաւորութեամբ հայ և օտարազգի յատուկ անունները, հոլովուելիս իրանց վերջաւորութիւնները պահում են և հոլովում առաջին հոլովման վրայ, օր. ածելիի, Անիի, Կրիստիի և այլն.

§ 13. Երկրորդ կանոնաւոր հոլովում:

(ան կամ եան)


| | b q w k ի թ ի ւ | տէրութիւն |
|------|---------------------------|----------------------|
| Ուղ. | տան | տէրութեան |
| Ա. | տան (ը) | տէրութեան (ը) |
| Տ. | տոն (ը) | տէրութիւն (ը) |
| Հ. | տանից | տէրութիւնից |
| Բ. | տնով | տէրութիւնով (թեամբ) |
| Գ. | { տնում տան մէջ | տէրութեան մէջ |

| | թ ռ գ ն ա կ ի թ ի ւ | տէրութիւններ |
|------|-------------------------------|--------------------------|
| Ուղ. | տներ | տէրութիւններ |
| Ա. | տների | տէրութիւնների |
| Տ. | տների (ն) | տէրութիւնների (ն) |
| Հ. | տներ (ը) | տէրութիւններ (ը) |
| Բ. | տներից | տէրութիւններից |
| Գ. | տներով | տէրութիւններով |
| Ն. | { տներում տների մէջ | տէրութիւնների մէջ |

Այս հոլովման վրայ հոլովում են ուն վերջացած գոյական անունները, բացի հուն և քուն և մէկ էլ այն բառերից, որոնց **մէջ** ուն վերջաւորութիւնը ածանցական մասնիկ է, օր. թռչուն, սողուն և այլն.

Երկրորդ հոլովման պէս հոլովում են նաև վերջացած գոյական անունները, որոնք միենոյն ժամանակ հոլովում են և առաջին հոլովման վրայ, օր. օծուա, օծան կամ օծումի և այլն.

Բացի այդ՝ այս հոլովման վրայ հոլովում են այն գոյական անունները, որոնց վերջում ն տառն անյայտացել է—դու (ն), պուկ (ն), թռո (ն) և այլն:



Այս կարգի բառերից միքանիսը հոլովում են միևնոյն ժամանակ և առ. հոլովման վրայ, օր. գառ, գառան կամ գառի:

Կան և այնպիսիները, որոնք միմիայն առ. հոլովման վրայ են հոլովում,—ոտ, կաթ, մատ, անձն, մասն:

Տէրութիւն բառի նման հոլովում են բոլոր թիւն վերջացող գոյական անունները:

Թիւն վերջացող յատուկ անունները հոլովում են առ. հոլովման վրայ:

§ 14. Չորրորդ կանոնատր հոլովում:
(ուայ-ուան)

| | Եզակի թիւ | Յոգնակի թիւ |
|------|-----------------------------|-------------------------------|
| Ուղ. | գիշեր | գիշերներ |
| Ա. | գիշերուայ-ուան | գիշերների |
| Տ. | գիշերուան | գիշերների (ն) |
| Հ. | գիշեր (ը) | գիշերներ (ը) |
| Բ. | գիշերուանից | գիշերներից |
| Գ. | գիշերով | գիշերներով |
| Դ. | { գիշերում գիշերուայ մէջ | գիշերներում գիշերներայ մէջ |

Այսպէս հոլովում են բոլոր ժամանակ ցոյց տուող գոյական անունները. բայց նրանցից միքանիսը միևնոյն ժամանակ հոլով ուում են և առ. հոլովման վրայ:

§ 15. Անկանոն հոլովում:

Կան գոյական անուններ, որոնք հոլովուելիս եզակի կամ յոզ նակի թւում ընդհանուր կանոնից շեղուու են, ուստի և կոչւու են անկանոն հոլովուղ բառեր. օրինակ, եզակի թւում շեղուու են՝ հայր, մայր, եղբայր, քոյր, տէր, կին, աներ, ընկեր, սէր Աստուած, ևայն, ինչպէս նաև սրանցից բարդուած բառերը. յոզ նակի թւում՝ հայ, յոյն, հրէայ, քաղաքացի, կարնեցի, ծնող, աղ ջիկ, կին, ուսումն, մարդ, ևայն:

Սակայն այս բառերը շատ անգամ հոլովում են և կան նաւոր հոլովման վրայ:

Կան նաև շատ գոյական անուններ, որոնք հոլովուելիս իրանց վերջին վանկում եղած ձայնաւորները, մանաւանդ ի, ու, իւ, կամ կորցնում են, կամ փոխում, ուստի և կոչւում են կորուամբ և փոխուսմամբ հոլովուող բառեր:

ՊԱՑԿԵՐ ԱՆԿԱՆՈՆ ՀՈԼՈՎՄԱՆ:

| | ա.) | ե | զ | ա | կ | ի | թ | ւ | ո | ւ | մ: |
|------|-----------------|---|---|---|---|---|-------------------|---|---|---|-----------------------|
| Ուղ. | հայը | | | | | | ըոյը | | | | սէր |
| Ա. | հօը | | | | | | ըրոջ | | | | սիրոյ |
| Տ. | հօըը | | | | | | ըրոջը | | | | սիրոյ (սիրոյն) |
| Հ. | հօըը | | | | | | ըրոջը | | | | սէր (ը) |
| Բ. | հօրից | | | | | | ըրոջից | | | | սիրուց |
| Գ. | հօրով (հօը հետ) | | | | | | ըրոջով (ըրոջ հետ) | | | | սիրով |
| Դ. | հօը մէջ | | | | | | ըրոջ մէջ | | | | { սիրում սիրոյ մէջ |

| | բ. | թ | ո | զ | ն | ա | կ | ի | թ | ւ | ո | ւ | մ: |
|------|--------------------------|---|--------------------------|---|----------------------------|---|---|---|---|---|---|---|--------------------------------|
| Ուղ. | հայք (հայեր) | | յոյնք (ներ) | | հրէայք (ներ) | | | | | | | | վանցիք |
| Ա. | հայոց | | յունաց | | հրէից | | | | | | | | վանեցոց |
| Տ. | հայոց | | յունաց | | հրէից | | | | | | | | վանեցոց (ը) |
| Հ. | հայերին | | յոյներին | | հրէաներին | | | | | | | | վանեցոց |
| Բ. | հայերից | | յոյներից | | հրէաներից | | | | | | | | վանեցիներից |
| Գ. | հայերով | | յոյներով | | հրէաներով | | | | | | | | վանեցիներով |
| Դ. | { հայերում հայերի մէջ | | յոյներում յոյների մէջ | | հրէաներում հրէաների մէջ | | | | | | | | վանեցիներում վանեցիների մէջ |

ԿՈՐՈՒՍՄԱՆ ԵՒ ՓՈՓՈԽՄԱՆ ՀՈԼՈՎՈՒԻՄ:

| | Ե | Զ | Ա | Կ | Ի | Թ | Ի | Ւ | | | |
|------|-------------|---|---|---|---|----------|---|---|--|--|------------|
| Ուղ. | մարմին | | | | | չուր | | | | | պատիւ |
| Ա. | մարմ'նի | | | | | չ'րի | | | | | պատուի |
| Տ. | մարմ'նի (ն) | | | | | չ'րի (ն) | | | | | պատուի (ն) |
| Հ. | մարմին (ը) | | | | | չուր (ը) | | | | | պատիւ (ը) |
| Բ. | մարմ'նից | | | | | չ'րից | | | | | պատուից |

| | | | |
|----|---------------|----------|------------|
| Գ. | մարմ'նով | չ'ըով | պատուով |
| Ն. | { մարմ'նում | չ'ըում | պատում |
| | { մարմ'նի մէջ | չ'ըի մէջ | պատուի մէջ |

Յոզնակի թւում վերոյիշեալ ձայնաւորները երբեմն մնում են,
երբեմն կորչում:

Բ.) ԱծԱԿԱՆ ԱՆՈՒԻՆ:

§ 16. Ի՞նչ է ածական անունը:

Այն բառերը, որոնք ցոյց են տալիս առարկաների որպիսութիւնը կամ յատկութիւնը, կոչում են ածական անուն:

Ածական անունը պատասխանում է ընչափիսի կամ ո՞րպիսի
և ո՞ր հարցերին, — կապոյտ երկինք, գեղեցիկ դէմք, կարմիր խըն-
ձոր, — կապոյտ, գեղեցիկ, կարմիր — ածական անուններ են:

Ածական անունները լինում են երկու տեսակ — որակական
և յարաբերական:

§ 17. ՈՐԱԿԱԿԱՆ ԱԾԱԿԱՆ ԱՆՈՒԱՆՆԵՐ:

Որակական ածականները ցոյց են տալիս առարկաների ընա-
կան որպիսութիւնը: — Գեղեցիկ, տգեղ, բարձր, հարթ — որակական
ածական անուններ են:

Որակական ածականներն ունին երեք համեմատութեան աստի-
ժաններ — դրական, բաղդատական, գերադրական:

ա.) Դրական աստիճանը ցոյց է տալիս առարկայի պարզ
որպիսութիւնը, առանց համեմատելու նրան ուրիշ առարկաների
հետ — բարի մարդ, գեղեցիկ տուն, փոքր սեղան:

բ.) Բաղդատական աստիճանը, համեմատելով առարկաների
որպիսութիւնը, ցոյց է տալիս նրանցից մէկի կամ միւսի որպի-
սութեան առաւելութիւնը կամ նուազութիւնը:

Սա կազմում է դրական աստիճանի վրայ աւելի բառն աւե-
լացնելով — ամելի բարի մարդ, ամելի գեղեցիկ տուն, ամելի փոքր
սեղան:

գ.) Գերադրական աստիճանը ցոյց է տալիս, թէ մի առար-

կայ որպիսութեան կողմից իւր նմաններից գերազանց կամ
շափազանց ստոր է:

Սա կազմում է դրական աստիճանի վրայ ամենա մասնիկը
և շատ, շափազանց, սաստիկ, անշափ բառերն աւելացնելով — ամե-
նազեղեցիկ կամ շատ գեղեցիկ տուն, ամենափոքրիկ կամ սաստիկ
փոքր սեղան:

§ 18. ՅԱՐԱԲԵՐԱԿԱՆ ԱԾԱԿԱՆ ԱՆՈՒԱՆՆԵՐ:

Յարաբերական ածական անունները ցոյց են տալիս առար-
կանների մէջ եղած յարաբերութիւնը — նիւթը, տեղը, ժամանակը,
ում պատկանելը, — բարէ տուն, պարսկական երկիր, հայկական
լեզու, երեկոյեան ժամերգութիւն:

Յարաբերական ածական անունները համեմատութեան աս-
տիճաններ չունին. չի կարելի ասել՝ ամելի քարէ տուն, ամենա-
հայկական լեզու, եայլն:

§ 19. ԱԾԱԿԱՆ ԱՆՈՒԱՆՆԵՐԻ ՀՈԼՈՎՈԱՄԸ:

Հայերէն լեզուի մէջ ածական անունները գոյականների հետ
վարուելիս՝ միշտ նախադաս են դրւում և չեն հոլովում, իսկ
երբ միայնակ են գործածւում, վարւում են՝ իբրև գոյական և հո-
լովում են, — աղքատ մարդ, աղքատ մարդու, աղքատ մարդուց
և այլն. աղքատ, աղքատի, աղքատով, եայլն:

Գ. ԹՈՒԱԿԱՆ ԱՆՈՒԻՆ:

§ 20. Ի՞նչ է թուական անունը եւ քանի տեսակ է լինում:

Այն բառերը, որոնք ցոյց են տալիս առարկաների թիւը կամ
կարգը, կրչում են թուական անուն:

Թուական անունները երկու տեսակ են լինում — 1) քանակա-
կան և 2) դասական:

1) Քանակական թուական անունները ցոյց են տալիս առար-
կանների պարզ թիւը և պատասխանում են քանի կամ որքան
հարցերին:

2) Դասական թուական անունները ցոյց են տալիս առարկաների կարգը (դասը) և պատասխանում են նր կամ նրերորդ հարցերին:

Օքինակ—քանակական—մէկ, երկու, երեք, չորս, եայլն:

Դասական—առաջին, երկրորդ, երրորդ, չորրորդ, եայլն:

Քանակական թուական անունների շարքին են պատկանում նաև կոտորակականները, որոնք ցոյց են տալիս ամբողջի մի կամ միքանի մասը—մի քառորդ, երեք քառորդ, երկու երրորդ եայլն:

Թուական անունները գործ են ածւում թէ գոյականապէս և թէ ածականապէս:

Գոյականապէս վարուելիս նրանք փոփոխւում են հոլովով և թուով, իսկ ածականապէս վարուելիս՝ անփոփոխ են մնում:

Օքինակ՝ չորս մարդ, չորս մարդու, չորս մարդուց, եայլն:
Չորսը, չորսի, չորսին, չորսով, եայլն:

Դ. Դերձնուին

§ 21. Ի՞նչ է դերանունը եւ քանի տեսակ է լինում:

Այն բառերը, որոնք գործ են ածւում գոյական և ածական անունների տեղ, կոչւում են դերանուն: Ես, դու, նա, իմ, այս, այսպիսի եայլն—դերանուններ են:

Այն դերանունները, որոնք գոյական անունների տեղ են դըրւում, կոչւում են գոյական դերանուններ, իսկ նրանք, որոնք դըրւում են ածական անունների տեղ, կոչւում են ածական դերանուններ:

Դերանուններն, իրանց մասնաւոր նշանակութիւններին նայելով, լինում են եօթը տեսակ:

1) Անձնական կամ էական—ես, դու, ինքն (նա):

2) Ստացական—իմ, քո, մեր, ձեր, իւր:

3) Հարցական—ով, ինչ, քանի, որքան, որչափ, ինչպիսի:

4) Ծուցական—սա, դա, նա, այս, այդ, այն, սոյն, դոյն, նոյն, այսպիսի, այզպիսի, այնպիսի, այսշափ, այզշափ, այնշափ:

5) Յարաբերական—որ:

6) Որոշեալ—ամենքը, բոլորը, ամեն մէկը, իւրաքանչիւրը:

7) Անորոշ—ոմն, ոք, մի ոք, մի ինչ, ոչ ոք, ոչինչ, այլոք, այլինչ, միւա, այլ:

§ 22. Դիմորոշ յօդեր:

Դերանունների արմատական տառերը—ս, դ, ն (ը), որոնք դրուելով հոլովուող բառերի վրայ՝ որոշում են նրանց դէմքերը, կոչւում են դիմորոշ յօդեր:

Ս—որոշում է առաջին դէմքին վերաբերեալ բանը—հայրս, ուսուցիչս:

Դ—երկրորդ դէմքին վերաբերեալ բանը—հայրդ, ուսուցիչդ:

Ն—երրորդ դէմքին վերաբերեալ բանը—հայրն (ը), ուսուցիչն (ը):

§ 23. Դերանունների հոլովումը:

Գոյական դերանուններից շատերը հոլովում են գոյականների նման, գլխաւորապէս առաջին կանոնաւոր հոլովման վրայ, իսկ ածական դերանունները կամ ամենին չեն հոլովում և կամ յօդով են հոլովում:

Գոյական դերանուններից՝ ես, դու, ինքն, նա, ով—իրանց առանձին հոլովումն ունին:

| | Եզ. թ. | Յոզ. թ. | Եզ. թ. | Յոզ. թ. |
|------|----------|----------|----------|----------|
| Ուղ. | Ես | մենք | դու | դուք |
| Ս. | իմ | մեզ | քո | ձեր |
| Տ. | ինձ | մեզ | քեզ | ձեզ |
| Հ. | ինձ | մեզ | քեզ | ձեզ |
| Բ. | ինձանից | մեզանից | քեզանից | ձեզանից |
| Գ. | ինձանով | մեզանով | քեզանով | ձեզանով |
| Ն. | ինձանում | մեզանում | քեզանում | ձեզանում |

| | Եզ. թ. | Յոզ. թ. | Եզ. թ. | Յոզ. թ. |
|------|----------|----------|---------|----------|
| Ուղ. | ինքն | իրանք | նա*) | նրանք |
| Ա. | իրա, իւր | իրանց | նրա | նրանց |
| Տ. | իրան | իրանց | նրան | նրանց |
| Հ. | իրան | իրանց | նրան | նրանց |
| Բ. | իրանից | իրանցից | նրանցից | նրանցից |
| Գ. | իրանով | իրանցով | նրանով | նրանցով |
| Ն. | իրանում | իրանցում | նրանում | նրանցում |

| | Եզ. թ. | Յոզ. թ. |
|------|---------|---------|
| Ուղ. | ով | ովքեր |
| Ա. | ում | |
| Տ. | ում | ու |
| Հ. | ում | ու |
| Բ. | ումնից | ու |
| Գ. | ումնով | ու |
| Ն. | ումնում | |

*) Այսպէս հոլովում են նաև սա, դու զերանունները:

Ե. Բ Ա Յ

§ 24. Ի՞նչ է բայը:

Այն բառերը, որոնք ցոյց են տալիս առարկաների գործողութիւնը կամ զրութիւնը, կոչում են բայ: — Աշակերտը կարդում է: Ջոնը պարկեց:

§ 25. Բայերի սեռերը:

Բայերը երեք սեռ ունին:

ա.) Ներգործական, ցոյց է տալիս այնպիսի գործողութիւն, որն անցնում է ուրիշ առարկայի վրայ: — Որսորդն սպանեց արջին:

բ.) Կրատորական, որը ցոյց է տալիս այնպիսի գործողութիւն, որը մի առարկայ կրում է ուրիշից: — Յոյները յաղթումցին թուրքերից:

գ.) Չէզոք, որը ցոյց է տալիս առարկայի զրութիւնը կամ այնպիսի գործողութիւն, որը չէ անցնում ուրիշ առարկայի վրայ, այլ մնում է գործող անձի մէջ: — Աշակերտը նստեց իւր տեղը:

§ 26. Բայի եղանակները:

Բայի եղանակները չորս են:

ա.) Անորոշ, որը բայի սկզբնական ձևն է: Սա ունի չորս վերջատրութիւն՝ ալ, ել, իլ, անալ: — Գնալ, տեսնել: Խօսել: Բարկանալ:

բ.) Սահմանական, որը որոշում է, թէ ով և երբ է կատարում գործողութիւնը: — Ես տեսնում եմ: Դու կըկարդաս: Նա խաղում էք:

Սահմանական եղանակն ունի երեք ժամանակ՝ ներկայ, անցեալ, ապառնի:

գ.) Հրամայական, որն յայտնում է խօսողի հրամանը կամ խնդիրը, որ գործողութիւնը կատարուի կամ չկատարուի: Կարդագասդ: Մի՛ զնար դուրս:

դ.) Ստորադասական, որն յայտնում է խօսողի կասկածը գործողութեան կատարուելու մասին: — Որ նստեմ, թէ որ գնանք:

§ 27. Բայի ժամանակները:

Բայի ժամանակները երեք են:

ա.) Ներկայ ժամանակ, որ ցոյց է տալիս, թէ գործողութիւնը այժմ է կատարում: — Կարդում է:

բ.) Անցեալ ժամանակ, որ ցոյց է տալիս, թէ գործողութիւնը առաջ էր կատարում կամ արդէն կատարուել է:

Սա լինում է երկու տեսակ՝ անցեալ անկատար և անցեալ կատարեալ: — Աշակերտը կարդում էք: Օշակերտը կարդաց:

գ.) Ապառնի ժամանակ, որ ցոյց է տալիս, թէ գործողութիւնը յետոյ պէտք է կատարուի:

Սա էլ լինում է երկու տեսակ—պարզ և բաղադրեալ:—Աշա-
կերտը կըկարդայ (պարզ): Աշակերտը պիտի կարդայ (բաղ.):

§ 28. Բայի դէմքերը եւ թուերը:

Բայը երեք դէմք ունի—առաջին, երկրորդ, երրորդ—(անձ-
նական գերանունների համեմատ):—Ես կարդում եմ, դու կարդում
ես, նա կարդում է:

Թուերը երկուս են—եզակի և յոգնակի:—Խաղում է: Խա-
ղում են:

§ 29. Դերքայ:

Բայերից առաջ են գալիս դերքայները, որոնք գործ են ած-
ւում թէ իբրև բայ և թէ իբրև գոյական կամ ածական անուն:
Դերքայները չորս են:—

ա.) Անորոշ, որն ունի բայի անորոշ եղանակի վերջաւորու-
թիւնները—ալ, ել, իլ, անալ:—Հարկաւոր չէ զնալ: Կարող ես
զրել: Դպրոցում արգելուած է խօսիլ: Ժուլանալը լաւ չէ:

բ.) Ներկայ, որը վերջանում է ող, ոտղ:—Գնացող: Փոփոխուող:

գ.) Անցեալ որը վերջանում է ած, (ուած) և ել:—Այդպիսի
բան տեսած չեմ: Քոյըս իւր դասն արդէն սովորել է:

դ.) Ապանի. որը վերջանում է լու:—Գնալու ճանապարհը
հարթ է: Եղբայրս վաղը վերադառնալու է:

30. Խոնարհում:

Բայերը փոփոխուում են ա.) եղանակներով բ.) ժամանակնե-
րով, գ.) դէմքերով և դ.) թուերով:

Բայերի այս փոփոխուումը կոչում է խոնարհում:

Խոնարհումը լինում է երկու տեսակ—կանոնատը և անկանոն:

§ 31. Օգնիչ բայեր եմ և լինել:
ա. եմ

| Ս ա հ մ ա ն ա կ ա ն ա կ | Ե ղ ա ն ա կ |
|-------------------------|-------------------|
| bq. թ. ես իմ | bq. թ. ես էի |
| Դու ես | Դու էիր |
| նա է. | նա էր. |
| Յոզ. թ. Մենք ենք | Յոզ. թ. Մենք էինք |
| Դուք էք | Դուք էիր |
| Նոքա են | Նոքա էին |
| Անցեալ անկատը | |

բ. լինել:

Ս ա հ մ ա ն ա կ ա ն ա կ

Ն ե ր կ ա յ

| Ե ղ ա կ ի թ ի ւ | Յ ո գ ն ա կ ի թ ի ւ |
|-----------------|---------------------|
| Ես լինում եմ | Մենք լինում ենք |
| Դու լինում ես | Դուք լինում էք |
| Նա լինում է. | Նոքա լինում են: |

Անցեալ անկատ.

| | |
|----------------|------------------|
| Ես լինում էի | Մենք լինում էինք |
| Դու լինում էիր | Դուք լինում էիր |
| Նա լինում էր. | Նոքա լինում էին: |

Անցեալ կատարեալ

| |
|----------|
| Ես եղայ |
| Դու եղաք |
| Նա եղաւ. |

| |
|------------|
| Մենք եղանք |
| Դուք եղաք |
| Նոքա եղան: |

Ապառնի պարզ

| |
|-------------|
| Ես կըլինիմ |
| Դու կըլինիս |
| Նա կըլինի. |

| |
|---------------|
| Մենք կըլինինք |
| Դուք կըլինիք |
| Նոքա կըլինին: |

Ապառնի բաղադրեալ

| |
|----------------|
| Ես պիտի լինիմ |
| Դու պիտի լինիս |
| Նա պիտի լինի. |

| |
|------------------|
| Մենք պիտի լինինք |
| Դուք պիտի լինիք |
| Նոքա պիտի լինին: |

Հրամայական եղանակ

| |
|-----------|
| Դու { |
| եղիք |
| մի լինիք. |

| |
|-----------|
| Դուք { |
| եղիք |
| մի լինիք: |

Ստորագասական եղանակ

| |
|--------------|
| Ես ոք լինիմ |
| Դու ոք լինիս |
| Նա ոք լինի. |

| |
|----------------|
| Մենք ոք լինինք |
| Դուք ոք լինիք |
| Նոքա ոք լինին: |

Դեղբայ

| |
|-------------------|
| Անորոշ լինել |
| Ներկայ եղող |
| Անցեալ եղել, եղած |
| Ապառնի լինելու |

§ 32. Կանոնաւոր խոնարհում:

Անորոշ եղանակ

1) ալ

2) ել

| |
|--------|
| Կարդալ |
| Սիրել |

Սահմանական եղանակ

Ներկայ ժամ.

| |
|------------------|
| Ես կարդում եմ |
| Դու կարդում ես |
| Նա կարդում է. |
| Մենք կարդում ենք |
| Դուք կարդում էք |
| Նոքա կարդում են: |

| |
|------------|
| սիրում եմ |
| սիրում ես |
| սիրում է. |
| սիրում ենք |
| սիրում էք |
| սիրում են: |

Անցեալ անկատար

| |
|-------------------|
| Ես կարդում էի |
| Դու կարդում էիք |
| Նա կարդում էր. |
| Մենք կարդում էինք |
| Դուք կարդում էիք |
| Նոքա կարդում էին: |

| |
|-------------|
| սիրում էի |
| սիրում էիք |
| սիրում էր. |
| սիրում էինք |
| սիրում էիք |
| սիրում էին: |

Անցեալ կատարեալ

| | |
|---------------|-----------|
| Ես սիրեցի | կարդացի |
| Դու սիրեցիք | կարդացիք |
| Նա սիրեց. | կարդաց |
| Մենք սիրեցինք | կարդացինք |
| Դուք սիրեցիք | կարդացիք |
| Նոքա սիրեցին: | կարդացին: |

Ապառնի պարզ

| | |
|----------------|----------|
| Ես կըկարդամ | կըսիրեմ |
| Դու կըկարդաս | կըսիրես |
| Նա կըկարդայ | կըսիրէ |
| Մենք կըկարդանք | կըսիրենք |
| Դուք կըկարդաք | կըսիրէք |
| Նոքա կըկարդան | կըսիրեն |

Ապառնի պարզ հայոց լեզու

| | |
|----------------|------------|
| Ես պիտի կարդամ | պիտի սիրեմ |
| Դու » կարդաս | » սիրես |
| Նա » կարդայ | » սիրէ |
| Մենք » կարդանք | » սիրենք |
| Դուք » կարդաք | » սիրէք |
| Նոքա » կարդան | » սիրեն |

Հրամայական եղանակ

| | | |
|------|-----------|----------|
| Դու | կարդա | սիրի |
| | մի կարդաք | մի սիրէք |
| Դուք | կարդացիք | սիրեցէք |
| | մի կարդաք | մի սիրէք |

Ստորագասական եղանակ

| | |
|----------------|----------|
| Ես որ կարդամ | որ սիրեմ |
| Դու » կարդաս | » սիրես |
| Նա » կարդայ | » սիրէ |
| Մենք » կարդանք | » սիրենք |
| Դուք » կարդաք | » սիրէք |
| Նոքա » կարդան | » սիրեն |

Դ ե ր բ ա շ յ

ա. Անորու

Կարդալ

Սիրել

բ. Ներկայ

Կարդացող

Սիրող

գ. Անցեալ

Կարդացել
Կարդացած

Սիրել
Սիրած

դ. Ապառնի

Կարդալու

Սիրելու

Անորուս եղանակ

3) իլ

4) անալ.

Խօսիլ

Բարկանալ

Սահմանական եղանակ

Ներկայ ժամանակ.

| | |
|-----------------|---------------|
| Ես խօսում եմ | բարկանում եմ |
| Դու խօսում ես | բարկանում ես |
| Նա խօսում է | բարկանում է |
| Մենք խօսում ենք | բարկանում ենք |
| Դուք խօսում էք | բարկանում էք |
| Նորա խօսում են | բարկանում են: |

Անցեալ անկատար

| | |
|------------------|----------------|
| Ես խօսում էի | բարկանում էի |
| Դու խօսում էիք | բարկանում էիք |
| Նա խօսում էր. | բարկանում էր. |
| Մենք խօսում էինք | բարկանում էինք |
| Դուք խօսում էիք | բարկանում էիք |
| Նորա խօսում էին | բարկանում էին |

Անցեալ կատարեալ

| | |
|--------------------|-----------|
| Ես խօսեցի | բարկացայ |
| Դու խօսեցիք | բարկացար |
| Նա խօսեց (աւ.) | բարկացաւ. |
| Մենք խօսեցինք | բարկացանք |
| Դուք խօսեցիք | բարկացաք |
| Նորա խօսեցին (ան:) | բարկացան: |

Ապառնի պարզ

| | |
|-------------------|-------------|
| Ես կըխօսեմ | կըբարկանամ |
| Դու կըխօսես | կըբարկանաս |
| Նա կըխօսէ (ի) | կըբարկանայ |
| Մենք կըխօսենք | կըբարկանանք |
| Դուք կըխօսէք | կըբարկանաք |
| Նորա կըխօսեն (ին) | կըբարկանան |

Ապառնի բաղադրեալ

| | |
|---------------|---------------|
| Ես պիտի խօսեմ | պիտի բարկանամ |
| Դու » խօսես | » բարկանաս |
| Նա » խօսէ (ի) | » բարկանայ |
| Մենք » խօսենք | » բարկանանք |
| Դուք » խօսէք | » բարկանաք |
| Նորա » խօսեն | « բարկանան |

Հրամայական եղանակ

| | |
|------|-----------------------|
| Դու | { խօսիլ մի խօսիլ |
| Դուք | { խօսեցէք մի խօսէք |

Ստորագասական եղանակ

| | |
|---------------|-------------|
| Ես որ խօսեմ | որ բարկանամ |
| Դու » խօսես | » բարկանաս |
| Նա » խօսէ (ի) | » բարկանայ |
| Մենք » խօսենք | » բարկանանք |
| Դուք » խօսէք | » բարկանաք |
| Նորա » խօսեն | » բարկանան |

Դ Ե Բ Բ Ա Յ

ա. Ներկայ

| | |
|-------|----------|
| Խօսող | բարկացող |
|-------|----------|

բ. Անցեալ

| | |
|-------|----------|
| Խօսել | բարկացել |
| Խօսած | բարկացած |

գ. Ապառնի

| | |
|---------|------------|
| Խօսելու | բարկանալու |
|---------|------------|

§ 33. Անկանոն խոնհարում:

Այն բայերը, որոնք խոնարհուելիս շեղում են ընդհանուր կանոնից, կոչւում են անկանոն խոնարհում ունեցող բայեր, ինչպէս օրինակ՝ տարում, դրուել, ուտել, զալ բայերը:

| Ա ն ց ե ա լ | կ ա տ ա ր ե ա լ |
|-------------|-----------------|
| տարուել | դրուել |
| Տարուեցայ | դրուեցայ |
| Տարուեցար | դրուեցար |
| Տարուեցաւ. | դրուեցաւ. |
| Տարուեցանք | դրուեցանք |
| Տարուեցաք | դրուեցաք |
| Տարուեցան: | դրուեցան: |

Զ. ՄԱԿՐԱՅ

§ 34. Ի՞նչ է մակրայը:

Այն բառերը, որոնք ցոյց են տալիս առարկաների գործողութեան կամ դրութեան զանազան պարագաները, այսինքն՝ կերպը, քանակութիւնը, տեղը, ժամանակը, պատճառը կամ նպատակը ևայլն, կոչւում են մակրայ:

§ 35. Մակրայների տեսակները:

Մակրայները բաժանում են հետեւալ գլխաւոր տեսակների.

1. Որակական – ինչպէս, այսպէս, այդպէս, այնպէս, սաստիկ, բռնի, կամայ, ակամայ ևայլն:

Որակական մակրայներից նրանք, որոնք առաջ են գալիս որակ, ածական անուններից, ունին համեմատութեան աստիճաններ:

2. Քանակական – այսչափ, այդչափ, որքան, շատ, սակաւ, աւելի շատ, եայլն:

3. Տեղական – այստեղ, այդտեղ, այնտեղ, հեռու, մոտիկ, ուր, որտեղ, ներսը, դուրսը, եայլն:

4. Ժամանակական – այժմ, յետոյ, երեկ, վաղուց, միշտ եայլն:

Է. ՆԱԽԱՐԱՐՈՒԹԻՒՆ

§ 36. Ի՞նչ է նախարարութիւնը:

Այն բառերը, որոնք՝ դրուելով մի որևէ հոլովի վրայ (բացի պղղականից), ցոյց են տալիս նրանց փոխադարձ յարաբերութիւնը, կոչւում են նախարարութիւն, օրինակ՝ վրայ, հետ, մօտ, յետոյ, համար, ներքեւ, վերեւ, առանց, մէջ, եայլն:

Բ. ՀԱՂԿԱՊ

§ 37. Ի՞նչ է շաղկապը:

Այն բառերը, որոնք մեր խօսակցութեան ժամանակ կտպում են մեր ամբողջ խօսակցութիւնները (մտքերը) կամ նրանց այլ-ևայլ մասերը միմեանց հետ, կոչում են շաղկապ, օր. ես կարդում եմ, իսկ դու գրում. Ես եւ դու կարդում ու գրում ենք:

§ 38. Շաղկապների տեսակները:

Շաղկապները լինում են՝

ա.) Երմատական - եւ (ու), իսկ, բայց, այլ, էլ, կամ, թէ, սակայն:

բ.) Ածանցեալ, որոնք առաջ են գալիս բանի միւս մասունքներից - այսինքն, այնուամենայնիւ, որպէսզի, կարծես թէ, իբր թէ, ևայլն:

Թ. ԶԱՅՆԱՐԿՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՄԻՋԱՐԿՈՒԹԻՒՆ

§ 39. Ի՞նչ է ձայնարկութիւնը:

Այն բառերը, որոնք արտայայտում են մեր հոգու զանազան տեսակ կրքերը - վիշտը, նեղութիւնը, երկիւղը, զարմանքը, ափսոսանքը, ուրախութիւնը, ցանկութիւնը, զգուանքը, ևայլն, կոշտում են ձայնարկութիւն կամ միջարկութիւն. օրինակ՝ ա՛խ, ո՛հ, ա՛յ, երանի՛ թէ, ափսո՞ս, վայ՛ թէ, ևայլն:

Ձայնարկութիւնների թուին են պատկանում և այն հնչիւնները, որոնցով մենք արտայայտում ենք անշունչ առարկաների կամ կենդանիների հանած ձայները - թռչուկ-շըշուկ, փիս-փիս, մինու, մու-մու, ևայլն:

ՉՈՐՐՈՐԴ ԲԸԺԻՆ

§ 1. Ի՞նչ է նախաղասութիւնը:

Իւրաքանչիւր մի միտք կամ դատողութիւն, որը արտայայտում ենք բառերով, կոչում է քան կամ նախաղասութիւն: - Աշակերտը կարդում է: Քարն ընկաւ. Աստուած մեծ է, - նախաղասութիւնոեր են:

§ 2. Նախաղասութեան գլխաւոր անդամները:

Իւրաքանչիւր նախաղասութիւն ունի երկու գլխաւոր անդամներ - ենթակայ և ստորոգեալ:

ա.) Ենթական այն առարկան է, որի մասին խօսւում է նախաղասութեան մէջ. Վերոյիշեալ նախաղասութիւնների մէջ աշակերտը, քարը, Աստուած - ենթականեր են:

բ.) Ստորոգեալն այն է, ինչ որ ասւում է ենթակայի մասին. - միենոյն նախաղասութիւնների մէջ - կարդում է, ընկաւ, մեծ է - ստորոգեալներ են:

Նախաղասութեան մէջ ենթական հեշտութեամբ կարելի է զտնել, ստորոգեալի հետ տարով ո՛վ և ի՞նչ հարցերը: - Ո՛վ է կարդում. Աշակերտը. Ի՞նչն ընկաւ. - Քարը:

Իսկ ստորագեալը գտնելու համար հարկաւոր է ենթակայի հետ այս հարցերը տալ - ի՞նչ է անում, ի՞նչ եղաւ, ի՞նչպէս է, ի՞նչ է (ի՞նչ քան է): - Աշակերտն ի՞նչ է անում: - Կարդում է: Քարն ի՞նչ եղաւ. - Ընկաւ. Աստուած ի՞նչպէս է: - Մեծ է: Խընդուն ի՞նչ է (ի՞նչ քան է): - Պտուղ է:

Գրելիս ենթական ստորոգեալից ոչ մի կէտով չէ բաժանում:

§ 3. Նախադասութեան երկրորդական անդամները:

Բացի գլխաւոր անդամներից նախադասութեան մէջ լինում են նաև երկրորդական անդամներ:

Նախադասութեան երկրորդական անդամները չորս տեսակ են լինում.

- ա.) Որոշիչ կամ յատկացուցիչ բառեր:
- բ.) Խնդիրներ կամ լրացուցիչ բառեր:
- գ.) Պարագայական կամ հանգամանական բառեր:
- դ.) Կոչական բառեր:

§ 4. Որոշիչ կամ յատկացուցիչ բառեր:

Որոշիչ կամ յատկացուցիչ կոչում են այն բառերը, որոնք որոշում են մի առարկայ ուրիշ իւր նման առարկաներից՝ ցոյց տալով նրա որպիսութիւնը կամ պատկանելութիւնը:

Նրանք պատասխանում են այս հարցերին՝ - որպիսի կամ ինչպիսի, քանի, ո՞ր, ում, ինչի: Չար մարդիկ պատժի արժանի են, եղբայրս երրորդ դասարանում է: Մանուկի գլուխը ցաւում է: Հոսանքուի ապակին կոտրուեց:

Որոշիչ բառերը որոշեալից ոչ մի կէտով չեն բաժանւում:

§ 5. Խնդիրներ կամ լրացուցիչ բառեր:

Խնդիրներ կամ լրացուցիչներ կոչում են այն բառերը, որոնք լրացնում են ստորոգեալի միտքը:

Նրանք պատասխանում են այս հարցերին.

Ո՞ւ, ի՞նչ (ը) (չայց. հոլ.)—Որսորդն սպանեց արջին: Ես դանակ կնեցի:

Ո՞ւմ, ինչի՞ (Տրակ. հոլ.) Աշակերտը գիրքը տուեց ուսուցչին: Զանասէր աշակերտը զովեստի արժանի է:

Ո՞ւմնից, ինչի՞ց (Բաց. հոլ.)—Նա եղօրից նամակ ստացաւ: Մարդու առողջութիւնը հարստութիւնից բարձր է:

Ո՞ւմնով, ինչո՞վ: (Գործ. հոլ.)—Մի մարդով գործը գլուխ չի գալ: Աշակերտը մատիտով գրում է:

Խնդիրները կամ լրացուցիչ բառերը ստորոգեալից և նախադասութեան միւս անդամներից ոչ մի կէտով չեն բաժանւում:

§ 6. Հանգամանական կամ պարագայական բառեր:

Այն բառերը, որոնք ցոյց են տալիս առարկայի գործողութեան կամ դրութեան զանազան հանգամանքները, կոչում են հանգամանական կամ պարագայական բառեր:

Հանգամանական կամ պարագայական բառերը ցոյց են տալիս.

ա.) Գործողութեան տեղը և պատասխանում են այս հարցերին. — ո՞րտեղ, ո՞րտեղից, ո՞ւր: — Մայրս նստած է սենեակում: Աշակերտները դպրոցից տուն եկան:

բ.) Գործողութեան ժամանակը և պատասխանում են այս հարցերին՝ ի՞նչպէս, ի՞նչ կերպով: — Միրտս արագ-արագ բարախում է: Արամն զգուշութեամբ մօտեցաւ ինձ:

գ.) Գործողութեան կերպը և պատասխանում են այս հարցերին՝ ի՞նչպէս, ի՞նչ կերպով: — Միրտս արագ-արագ բարախում է: Արամն զգուշութեամբ մօտեցաւ ինձ:

դ.) Գործողութեան պատճառը և նպատակը և պատասխանում են այս հարցերին՝ ի՞նչպէս, ի՞նչ պատճառով, ինչի՞ համար, ինչի՞ց, ի՞նչ նպատակով: — Զմրան երկիրից զետը քար կտրեց: Քոյլս գնաց գիրը գնելու:

Պարագայական բառերը միւս անդամներից ոչ մի կէտով չեն բաժանւում:

§ 7. Կոչական բառերը ցոյց են տալիս, թէ խօսողը ում է զառնում իւր խօսքով:—Տէ՛ր, ներիր ինձ, մեղաւորիս: Մանո՞ւկ, մանո՞ւկ, ինձ շխարես:

Երբ կոչական բառը նախադասութեան սկիզբը կամ վերջն է գըուած, ստորակէտով է բաժանւում միւս անդամներից. իսկ եթէ նա ընկած է լինում նախադասութեան մէջ, երկու ստորակէտի մէջ է առնւում:—Տէ՛ր, Քեզ յայտնի է մեր մտքերն ու խորհուրդները: Մեր մտքերն ու խորհուրդները յայտնի են քեզ. Տէ՛ր, Քեզ յայտնի են, Տէ՛ր, մեր մտքերն ու խորհուրդները:

§ 8. Համառոտ եւ ընդարձակ նախադասութիւններ:

Այն նախադասութիւնը՝ որի մէջ կան միմիայն գլխաւոր անդամներ, կոչւում է համառոտ. իսկ այն, որի մէջ բացի գլխաւոր անդամներից կան նաև երկրորդական անդամներ, կոչւում է ընդարձակ:—Աշակերտները կարդում են (համառ.): Մեր զասարանի աշակերտները այգում կարդում են իրանց զասը (ընդարձ.):

§ 9. Դիմաւոր եւ անդէմ նախադասութիւններ:

Այն նախադասութիւնը, որի մէջ ենթական յիշուած է կամ մտքով հեշտութեամբ կարող է խմացուել, կոչւում է դիմաւոր:—Զկնորսները իրանց ուղկանն են քաշում: Մայրիկ, ինձ հաց տուր (դու) ուտելու:

Այն նախադասութիւնը, որի մէջ ենթական յայտնի չէ կամ բոլորովին անյայտ է, կոչւում է անդէմ:—Ասում են, երկրաշարժ կըլինի: Ցըտեց: Անձրեւում է:

§ 10. Գլխաւոր եւ երկրորդական նախադասութիւններ:

Այն նախադասութիւնը, որ ուրիշ նախադասութիւնից կախում չունի, կոչւում է գլխաւոր. իսկ այն նախադասութիւնը, որը գլխաւորից կախում ունի և նրան պարզաբանելու համար է գրուած, կոչւում է երկրորդական:—Երանի այն երկրին, որի ընակիչները հասկանում են իրանց շարն ու բարին: Այս օրինակի մէջ երանի այն երկրին գլխաւոր նախադասութիւն է, իսկ որի ընակիչները հասկանում են իրանց շարն ու բարին:—Երկրորդական:

Երկրորդական նախադասութիւնները լինում են՝ ա.) հնթակայ, — ով ականջ ունի լսելու, թող լսէ: բ.) Յատկացուցիչ, — 2 ինստանում օրէնք կայ, որի զօրութեամբ կտրում են խարերաների ձեռքերը: գ.) Լրացուցիչ, — գիտնականներն արդէն հաստատել են, թէ լրախնն էլ մի զնդաճեւ մարմին է: դ.) Պարագայական, — երբ զարունը բացում է, գիւղացիք սարն են տանում տաւարը:

Երկրորդական նախադասութիւնները գլխաւորից բաժանում են ստորակէտով:

§ 11. Միջանկեալ նախադասութիւն:

Այն նախադասութիւնը, որ ընկած է մի ուրիշ նախադասութեան մէջ և նրա ոչ մի անդամից կախում չունի, կոչւում է միջանկեալ: Մի անդամ (յուլիս ամսին եր այդ) օըը սաստիկ տաք էր:

Միջանկեալ նախադասութիւնը գլխաւորից բաժանում է երկու ստորակէտով կամ փակագծերով:

§ 12. Պարզ եւ բաղադրեալ նախադասութիմներ:

Այն նախադասութիւնը, որի անդամներից ոչ մէկը կը կնուած չէ. այլ իւր մէջ մի պարզ միտք է պարունակում, կոչում է պարզ: — Պարտիզանն աշխատում էր իւր պարտիզում — սա մի պարզ նախադասութիւն է:

Իսկ այն նախադասութիւնը, որ կազմուած է երկու կամ աւելի նախադասութիւններից, կոչում է բաղադրեալ:

Բազուգրեալ նախադասութիւնը կազմում է մի գլխաւոր և մէկ կամ միքանի երկրորդական նախադասութիւններից: — Ում ասես, որ չի գրաւում անտառի գեղեցկութիւնը — բաղադրեալ նախադասութիւն է:

§ 13. Միատրեալ նախադասութիւն:

Այն նախադասութիւնը, որը կազմուած է երկու կամ աւելի նախադասութիւնների միաւորութիւնից, կոչում է միատրեալ: — Աշակերտները գպրոցում կարգում, գրում և նկարում են — միատրեալ նախադասութիւն է:

Միատրեալ նախադասութիւնների մէջ կարող են լինել միքանի ենթակայ, միքանի ստորոգեալ կամ միքանի միատեսակ երկրորդական անդամ, որոնք եթէ միմեանց հետ կապուած չեն եւ, ու շաղկապներով, իրարից ստորակէտներով են բաժանւում:

ՆԻՒԹԵՐ ՎԱՐԺՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Ա.) ՄՐՁԻՒՆԸ ԵՒ ԱՂԱԽԻՆԻՆ

Մի անդամ մրջիւնը գնաց առուակից ջուր խմելու: Յանկարծ ալիքը ներս ըաշեց նրան: Այդ միջոցին մի աղաւնեակ թռչում էր առուակի վրայով՝ մի ճիւղ կտցում բռնած: Երբ տեսաւ նա մրջիւնի դառն վիճակը, խղճաց նրա վրայ և իսկոյն իւր բերանի ճիւղը ձգեց նրան: Մրջիւնը նստեց ճիւղին և ազատուեց: Այդ առուակից մի քիչ հեռու որսորդը ցանցով թռչուններ էր որսում: Խեղճ աղաւնին մտաւ ցանցի տակ, որ միքանի հատիկ էլ ինքը ժողովէ: Որսորդը պատրաստում էր բռնել նրան ցանցով: Մրջիւնը՝ նկատելով այդ, իսկօյն մօտ սողաց որսորդին և այնպէս սաստիկ կծեց նրա ոտքը, որ նա հառաչեց և վայր ձգեց ձեռից ցանցը: Այդպէս մեր աղաւնին թռաւ, ազատուեց:

Թարգ.

Բ.) ՊԱՊԸ ԵՒ ԹՈՒՆԻԿԸ

Սաստիկ ծերացել էր պապը: Վատ էր տեսնում նա և ծանր լսում: Ծերութիւնից արդէն նրա ձեռներն ու ոտները դոզզողում էին: Կերակուր ուտելիս նա կաթկաթացնում էր սպասը զգալից: Այդ բանը դիւր չէր գալիս նրա որդուն ու հարսին. դրա համար

Էլ նրանք չէին թողնում խեղճ ծերունուն իրանց հետ սեղան նստելու, այլ մի կաւէ ամանով առանձին էին կերակուր տալիս նրան։ Մի օր էլ ծերունու ձեռները դողդողացին, ամանը վայր ընկաւ և փշուր-փշուր եղաւ։ Այդ պատճառով էլ աւելի չարացան որդին ու հարսը և սկսեցին մի փայտէ ամանով կերակրել նրան։ Ծերունին մի փոքրիկ թոռնիկ ունէր։ Մի անգամ նրա հայրը տեսաւ, որ որդին, յատակի վրայ նստած, մի ինչ որ բան է շինում փայտից։ «Այդ ինչ ես շինում, որդի,» — հարցրեց հայրը։ — «Գուշ, հայրիկ, — պատասխանեց մանուկը. — Երբ դու և մայրիկս ծերանաք, ես ձեզ սրանով պէտք է կերակրեմ։» Լսելով այդ, հայրն ու մայրը իրար երես նայեցան և կարմրեցին։ Նրանք այնուհետև զաղարեցան ծերունուն առանձին նստացնել և սկսեցին պատուով պահել նրան։ — «Ինչ որ ցանես, այն կը հնձես», — ասում է առածը։

Թարգ.

Գ.) ԱՐԱՐԱՏԵԱՆ ԴԱՅՏԸ

Առաւոտ էր։ Արարատեան դաշտը և Մասիս լեռան սպիտակափառ գագաթը փայլում էին վարդագոյն շողերով՝ արեի առաջին ճառագայթների ներքե։ Արագածի պսակաձև գագաթը դեռ չէր երեսում։ Նա պատած էր դեռ ձիւնի պէս սպիտակ մշուշով։ Կանաչագարդ դաշտավայրը վառւում էր ծիածանի ամենանուրը զոյներով։ Փշում էր մեղմ հովիկը. ծաղիկները ժպտում էին։ Դալար խոտաբոյսերը ծփում ու ծածանում էին և դաշտի խաղաղ տարածութիւնը օրօրւում էր սրանչելի ալէկոծութեամբ։

Դաֆֆի

Գ.) Ա Մ Ա Ռ

Գալիս է ամառ, այրող եղանակ,
Անխոնչ վաստակի պտղի ժամանակ.
Իւր աստուածեղէն չերմութեան հոգին
Վենսատու շողով ծաւալէ արփին։
Հանել է ծիրան, տանձը մեղրածոր,
Կարմիր վարդի պէս փայլում է խնձոր։
Սաթի պէս դեղին կախուած է ողկոյզ։
Մանկտին գրաւում է շլոր, նուռ ու թուզ։
Սեխով, ձմերկով լիքն է բուրաստան։
Ոսկեայ հոսանքով ծփի անդաստան։
Եւ արտօրայքի ծանրացած հասկեր
Խիստ հիանալի նկարեն պատկեր։

Վ Ե Ր Զ





ՀՀ Ազգային գրադարան



NL0248033

5963